1117
1690-a

16861

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 584

Գրատեպ. № 263 բ. Տիրաժ 3000. Վիմագր. Հայպոլիգ. պատ. № 4003.

ԳՈՐՏԻՆ ԱԶԱՏԵՑ

Սիրուն, խելոք Վարդուշն իսկի գորտ չեր սիրում։ Զզվում եր նրա սառը, լպծուն մարմնից, չոռոծ աչքերից։ Ու

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԳԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ծվում էր, կուշ էր գալիս, յերբ յեղբայրները գորտը մոտ եյին բերում։

Մի անգամ Վարդուշը բակում նստած կար էր անում։ Մին էլ տեսավ իրենց կլավան փիսոն խաղում է մի բանի հետ.—թռդնում է, յետ է ցատկում, նորից սղմում դետնին։

— Ես ինչի՞ հետ է խաղում,— մտածեց Վարդուշը։ Վեր կացավ, մոտեցավ, տեսավ, վոր մի խեղճ գորտ է։ Խեղճը տանջվել, չարչարվել էր, ուզում էր՝ մի կերպ փախչի. բայց վոնց կարող էր, հենց ոզում էր մի կողմի վրա թռչի թե չե, կլավանը չ'ըմփ, գլխին հասցնում էր ու գետնին կպցնում։

Վարդուշի մեղքն եկավ գորտը, ուզեց ազատել։ Կլավանին գրկեց, մի կողմը գցեց ու կռացավ գորտի վրա։ Գորտը խեղճ-խեղճ, աչքերը չռած՝ նրան էր նայում։

Վարդուշը մոռացավ, վոր գորտ չի սիրում. վերցրեց—դրեց ձախ ափի մեջ—վոչինչ, զզվելի չե, ե՞ինչ կա վոր, կարծես թաց տերև լինի։ Աջ ձեռքով բռնեց ու վազեց ամենահեռու անկյունը։ Ենտեղ կիտած քարերի մեջ

մեծ—մեծ ավելուկ էր դուրս յեկել։ Գորտը դրեց ավելուկի տերևների տակ ու ասաց.

—Դե՛, գնաս բարով, գնա՛ քո ճուտերի մոտ։

Յերբ նա հեվալով յետ վազեց դեպի տուն, մայրը պատուհանից, ձայն տվեց.

—Վարդուշ, արի թեյ խմիր։

Վարդուշը կարը ծալեց, կարգին վերցրեց ու գնաց ներս։

Թեյ խմելիս, նա ինքն իրեն ծիծաղում էր։

—Էլ ի՞նչ է պատահել, ինչի՞ յես ծիծաղում, հարցրեց մայրը։

Վարդուշը լուռ էր։

Այդ րոպեին նա մտածում էր, վոր գորտը հիմա հասել է իր տունը ու հարեվաններին պատմում է, թե Վարդուշը վոնց ապատեց նրան կլավանի ճանկերից։

Ա II/402936

Հ. Յ. ՍԱՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220040296

[034.]

K

A 40296

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՀՐԱՏԻ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԳՐԱԴԱՐԱՆ

Շունն ու կատուն, Հովվ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ	50 կ.
Մեծն Հոկտեմբեր, ԽՆԿՈ ԱՊԵՐ	30 կ.
Առաջին վորսը, փոխադր. ԽՆԿՈ ԱՊԵՐ	50 կ.
Մի գավաթ թեյ, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ	60 կ.
Ջեյրանի հիվանդությունը, ՍԻՄԱԿԻ	20 կ.
Վարսիկի տիկնիկը փոխ. »	20 կ.
Գորտին ազատեց » »	20 կ.
Ցոլակի շապիկը » »	20 կ.
Ինչ լավ ոգնեցին » »	20 կ.
Նանի թանը » »	20 կ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

Մանկակոչ կամ Մանկ. Ինտերնացիոնալ, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ
Նույլ՝ թուրքերեն, փոխ. ՍՈՂԱՓՅԱՆ
Հակա բզեզը ու քաջ. ծիտիկը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ
Եղջերուն, Հովվ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Դոբ շողեշարժը, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ
Հովիվ Մկոն ու կկուն, փոխ. ԽՆԿՈ ԱՊԵՐ